

գերեզմանների վերայ ծանր քարեր են դնում: այլ տեղերում՝ քարձր ցանկապատով շրջապատում են գերեզմանները: Աշանթիները դանակ են խրում մեռելի կոկորդը, ուրիշները հանում են մեռելի սիրտն ու լնզունն եւ կամ վիզն են կտրում: Դիակապտման գործողութիւնները շատ տարբեր են: Նորվեգացիք մարմինը տանող ծին հակառակ են թափում: Ձիւնական ժողովուրդներից ոմանք եւ Ճաւացիք անմիջապէս փախում են մարմինը գերեզման դնելուց յետոյ: Կարմրամորթները եւ իրուաթները մեռելների յետեւից քար են ձգում: Ձիւնի բնակիչները հետեւում են մեռելին տաք մոխրի պարկով, որ եւ ցանում են ծանապարհի վերայ, որպէս զի վերադարձողի ոտները այրուի: Արգովացիք դադաղի յետեւից մի քանի զոյլ շուր են անում: Հրէաները մէջքն են դնում մի քանի խուրձ խոտ կամ ծիւղ են ձգում: Գվինիացիք Կոնգոյի բնակիչները եւ ուրիշները վերադարձին ծանապարհ փակում են վեշերով եւ եղեգնայ ցանկապատով: Թաղուհիք վեշադառնալուց յետոյ դարձեալ արարողութիւններ կան: կարծում են, որ պէտք է անմիջապէս մաքրել մարմինը եւ զգեստները անտեսանելի կերպով նստած մասնիկներէ: Քրիստոնեաների այժմեան օրհնած շրի փոխանակ հին Մազդեզանց կրօնի հետեւողները ամբողջ մի շաբաթ գործողութիւններ ունէին կատարելու: Ռուս գիւղացիները վերադարձից անմիջապէս յետոյ շեկացած անուխ են առնում, ձգում են իրենց առաջնը դէպի վեր եւ սրբման մի աղօթք են ասում: Քաֆրների մէջ սովորութիւն է, որ մեռելաթաղները իրենց սեփական արեան մէջը լողանան:

Եգիպտոսում թափ են տալիս եւ մաքրում են գորգերը, քարձերը, թաղիները եւ տակն ու վրայ են անում բոլոր կարասին: Ետիոպիայում սովորութիւն է անմիջապէս ժամացոյցները եւ ծոծմանակները լարել:

Բոլոր այս տարբեր սովորութիւնները մի ընդհանուր նմանութիւն ունին: Կենդանի մնացածները աշխատում են ըստ կարելոյն շուտով մոռանալ մեռածներին եւ բռնել նրանց թողած տեղը: Իրաւ է շատ են ողորմ անայտա-ցածի մասին, քայց նրա գնալուց քիչ յետոյ այնեւ տեղ չկայ նորա համար կեանքի յաւիտենական խնժոյքի սեղանին:



ԱՁԳԱՅԻՆ

ՀԱՅ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆՈՒԵԱՆ ՄԷՋ ԿՂԵՐԱԿԱՆ ՈԳԻ ՈՐՈՆԱԿՆԵՐԸ.

Յայտնի է, թէ ինչ համերաշխութեամբ գործում են Թիֆլիսի Մշակ եւ Կ. Պօլսի Հայրենիք թերթերը, թէ ինչպէս նոքա կարծես մի ստորերկրեայ հազորդակցութեան շրնորհիւ միաժամանակ զբաղւում են նոյն խնդիրներով, նոյն անձերով, նոյն տարօրինակ զաղափարներն են լոյս աշխարհ հանում: Քանի նոքա իրենց սովորական յարձակումներն էին կրկնում հայ հոգեւորականութեան դէմ, աշխատում էին անուանարկել թերթիս խմբագրութեան կամ նորա անդամներից մէ-

կին ու միւսին այնպիսի կոչումներով եւ մեղադրանքներով, որոնց անհիմնութիւնը սկներեւ պէտք է լինէր ամէն մի փոքր իշատէ խելահաս եւ արդարամիտ անձի համար՝ մենք անպատեհ էինք համարում ուշադրութեան առնել նոցա դրածները: Բայց երբ նոքա սկզբունքի խնդիր են դնում երկր միաձայն պնդում են, հայ ժողովրդին հաւատացնել ճշգնում, թէ նորա հոգեւորական դասը « զատ ցեղ մըն է», որ իւր սեփական, ժողովրդի հակառակ շահերն ունի, թէ նա սնուցանում է իւր մէջ մի այնպիսի կղերական ոգի, որով ներշնչուածների ղէվիզն է. « Այ՛ մի տեղ ժողովուրդը, ամէն տեղ կղերը», մենք իրաւունք չենք համարում այլ եւս լռել:

Այ՛ թէ իրաւացի է այն տեսակէտը, որ հոգեւորականները ժողովուրդի ծառաներն են, բնական է, որ հրապարակաօսներն էլ իրրեւ ժողովրդի ներկայացուցիչ, նոցա բնական տէրերը լինելով՝ իրաւունք համարեն իրենց ասիական աշխարհայեցողութեամբ բարկանալ, սիրտըն ուզած անարգանքները թափել իրենց այդ ծառաների վերայ, առանց սպասելու, որ նոքա ձայն հանեն, դանդաղաբեւ համարձակին: Սակայն իշխանական ոչ մի ձգտում չունենալով եւ ծառայ անունից խոյս չտալով հանգերձ՝ մենք յաւակնութիւն ունինք ձայն բարձրացնելու եւ ժողովուրդին, նոյն ինքն հրապարակաօսներին հաւասար իրաւունքներ պահանջելու նա եւ մեզ՝ հոգեւորականներին համար պահանջելու, որ առանց փաստերի չխօսեն եւ իբրեւ կանխօրէն դատապարտութեան մատնուած մի դատակարգի՝ ամէն վիրաւորանք անարգել թոյլ չտան իրենց: — Փաստեր արհամարհում է ի հարկ է Մշակը ինչպէս միշտ, նա բաւականանում է միայն բացականչութիւններով, վեր բառերով՝ համոզւած, որ իւր բնութեցողներից մեծ մասի համար իւր ասածը ասած է, մանաւանդ հոգեւորականների մասին ասածը ինքն ըստ ինքեան ճիշդ պէտք է համարուի: Բայց Հայրենիքը աւելի բարեխիղճ է. նա փաստեր է բերում, նա վերցնում է Արարատի ապրիլ ամսի առաջնորդողից մի հատ-

ուած: * որ ամբողջապէս հիւսուած է Ղաթ-
թէի Պատուարի նշանաւոր երկրորդ մենա-
խօսութիւնից, և պնդում է, թէ «Սիջ-
նադարեանն՝ ո՛ր և է կրօնաւորէ մնացած զիրք
մը այդ ամէնքը կրսէ և դեռ լատադոյն-
ներն ալ, և ապա եզրակացութիւն է հա-
նում: ուրեմն « թէ զաղափարով, թէ զգա-
ցումով միջնադարեան են այդ կղերամիտնե-
րը: (իմն մերս նուաստութիւնը և իմ
ընկերակիցներն ու զաղափարակիցները, որ
Ղաթթէի դրուածքը վիայութիւն առնելով՝
հաստատում ենք, թէ քրիստոնէական հաւա-
սոյ հիմք Քրիստոսի յարութիւնը ցնորք չէ):
Պատուարի խօսքերը մէջ բերելով՝ մենք ենթա-
դրում էինք: թէ ամէն մի միջնակարգ կրթու-
թիւն ստացած մարդ ծանօթ պէտք է լինի
նոր դարու գրականութեան այդ ամենաե-
րեւելի արդիւնքի հետ պէտք է կարողութիւն
ունենայ հասկանալու: թե ով է նա, որ բո-
լոր գիտութիւնները սովորելուց և երկնքի ու
երկրի երեսը քննելուց յետոյ՝ բնութեան
զաղանիքը թափանցել չկարողանալով, աշխար-
հի վերայ ոչինչ էական, կեանքին արժէք տը-
ւող բան չգտնելով՝ թոյնի բաժակը շրթունքին
է դնում և միայն մի ձայն, այժմ գերեզմանից
եկած մի ձայն, կարողանում է մահուան քա-
ռերները փախցնել և կեանքը կրկին քաղցր,
խորհրդաւոր դարձնել նորա համար: Այս
Ղաթթէն, համաստուածեան Ղաթթէն, որ
իւր ժամանակին իշխող զաղափարների ազդե-
ցութեան ներքոյ՝ տեսականապէս հաւատ ըն-
ծայել չէր կամենում եկեղեցւոյ դաւանած
երկնային խորհուրդներին, իւր ստացած քրիս-
տոնէական կրթութեան շնորհիւ և իբրեւ բարձ-
րագոյն հանձարի տէր անձն՝ տիեզերքի և
մարդկային հոգու անհուն զաղանեաց ծովի
վերայ լողալիս, ամէն անգամ երբ ընկղմելու
մօտ է եկել, բռնել է այն միակ ազատարար
ձեռքը, որ անդունդի վերայով դէպի ինքը
մեկնուել կարող էր: Այդպէս և իւր Պատու-

տին իրական ու կախարդական աշխարհներում
պտտեցնելուց յետոյ՝ ստիպուած էր վերջ ի
վերջոյ ծունկ չողեցնել մարդկային մեղքերը
վերցնող և երանութեան դռները բաց անող
անմահ Աստուածորդու գահի առաջ: — Սա-
կայն մեր յառաջագիմութեան մունեակներին
համար Պատուստը հնացած, անպէտք գործ է
արդէն, և հսկայ Ղաթթէն, անզուգական բա-
նաստեղծն ու խորաքննին փիլիսոփան և բը-
նագետը՝ իւր տիեզերական հանձարով, միջնա-
դարեան փտած զաղափարների տէր մարդ:
Ահա թէ ինչպիսի անհեթեթութիւնների հաս-
նել կարող է մէկը, որ նախ օդային եզրակա-
ցութիւններ է կազմում՝ ապա փաստերի ե-
տեւից ընկնում: — Բայց գուցէ կան մարդիկ,
որ այսպիսի բաները անհեթեթութիւն չեն հա-
մարում: անհեթեթութիւն չեն համարում,
երբ Արարատը նոյն ամսին իւր ազգային
բաժնի առաջնորդողով՝ բովանդակ հայ եկեղե-
ցականութեան՝ հրաւեր է կարդում իրեն աշ-
խատակցելու, այն համոզմամբ, որ հայ ազգը
պէտք է ճանաչէ, պէտք է գիտենայ հայ ե-
կեղեցու վիճակը, որ հետաքրքրուի նորանով:
Իսկ Հայրենիքը հետեւեցնում է այդ խօսքերից,
թէ ուրեմն հայ եկեղեցականութիւնը հայ
ժողովրդէն, այսինքն հայ եկեղեցիէն, զատ-
ուած օտար մարմին մըն է, որ ունի իր մաս-
նաւոր բերանը, Արարատը, որուն շուրջը
պէտք է բոլորվին միայն հայ եկեղեցականնե-
րը, և այդ յետադէմ՝ զաղափարների համար
դատաւիժիւ է կարդում այն նորելուկ «վաւե-
րական աստուածաբանների» զխնի, որոնք «Ա-
րեւմտեան կրօնամոլութեան կեդրոններու մէջ
հարեանցի ուսում առած լինելով՝ մտքերնին
դրած են, թէ պիտի կրնան 19-րդ դարու
վերջին օրերուն մէջ հայ ազգը կղերամիտ ը-
նել: Այսպէս ուրեմն Բերլինը, Հալլէն,
Մարբուրգը, Տիւրինգէնը՝ արեւմտեան կրօ-
նամոլութեան կեդրոններ, են և Հառնակը,
Կաթտանը, Կաուչը, Լոֆսը, Հերմանը,
Վայցգէկերը՝ լուսաւոր Լեւոսայում իբրեւ ա-
մենազատամիտ և առաջնակարգ գիտնական
արժէքի տէր ճանաչուած աստուածաբաննե-

* «Եւ ամէն անգամ, երբ մարդկութիւնը իւր մտա-
ւոր կարողութիւնների, իւր ուժերի վերայ վստահ երկնքի
ու երկրի երեսը կ'ըննէ ...»

րը՝ յետագէմ խաւարամիտներու Խեղճ մարդիկ՝ զեռ մի քանի շարաթ առաջ Պերմանիայի մայրաքաղաքում հաղարդիւնան բարձր ուսում ստացած բողոքականների մի ժողով դատաւարութեամբ էր նոցա՝ ազատամիտ գաղափարներով նոր սերունդը մոլորեցնելուն՝ ազատամիտ հոգեւորական մի դասակարգ պատրաստելուն համար, և միաժամանակ Ասիայի մի անկիւնում՝ Հայաստանեայց հաւանդ եկեղեցու հաւատարիմ զաւակները կրօնամոլ դուխներ իրենց մօտ ուղարկած լինելուն համար՝ խաւարամտութեան վկայական են տալիս նոցա։ Ինչպէս պէտք է զտրմանն և ինչքան միսթարութիւն մեր յարգելի ուսուցիչները, երբ իմանան թէ ինչպիսի մեծ յառաջագիւծութիւն է արել հայկական Ասիան՝ եւրոպական Պերմանիայի հետ բաղդատելով։

Ահա այսպիսի փաստերով է, որ ապացուցանում են հայ հոգեւորականութեան «զատցեղ մը» կազմելը՝ ժողովրդին նրա իրաւունքներին, նրա մասնակցութեան, նրա արածութիւններին՝ դէմ լինելը։ «ամէն տեղ կղերի նեղ, վնասակար, դասակարգային վարտիչ ուղին» մտցնելու դիտումը։—Յայտնի է, թէ ինչքան պակաս է եղել այդ ողին մեր եկեղեցու մէջ նորա ամբողջ պատմութեան ընթացքում ինչպէս միանգամայն անհաշտելի է նա այդ եկեղեցու ոգու, նորա հիմնական սկզբունքների և բոլոր կազմութեան հետ, բայց այդ իմանալու համար, իրերի խորքը տեսնել, պատմութիւնը ըմբռնել պէտք է մի շնորհք, որից զուրկ է մեր ներկայ յառաջագէմ սերունդը։ Ինչպէս այն մարդը, որի աչքերը առաջին անգամ են բացուում խորանարդային երրորդ տարածութեան մասին գաղափար կազմել չի կարող, հարթ գոյնզգոյն մի մակարդակ է տեսնում՝ այդպէս են նաեւ նոր աչք բաց անող հասարակութիւնները, նոքա միայն իրերի արտաքինն են տեսնում, իրենց կարճատես աչքի օգնութեամբ տեսութիւններ կազմում ներկայի և անցեալի մասին։ Պարզօրոցում նոր սերունդը սովորում է, որ կաթոլիկ կղերը մի առանձին մարմին է կազմում

իւր համար, միջին դարերում ինկվիզիցիա է յառաջ բերել, անմեղ մարդկանց խարոյկների վերայ բարձրացրել և մասնաւորից ընդհանուրին անցնելով՝ նա հեշտութեամբ օրէնք է հանում թէ հոգեւորականութիւնը ուրիշ կերպ լինել չի էլ կարող։ Իսկ միամիտների այդ տրամադրութիւնից գիտեն շատ լաւ օգուտ քաղել ճարպիկ, ժողովրդի անունով խօսող մարդիկ։ Սենք շատ լաւ ենք ծանաչում այդ մարդկանց, տեսել ենք նոցա ամենանշանաւոր ներկայացուցիչներին հաղարաւոր ամբոխի առաջ կանգնած, ինչպէս են նոքա խօսում սրբախօսում և հաճոյախօսում։ Չերն է իրաւունքը, ձերն է սեփականութիւնը, ձերն է ամէն ինչ, հարուստները, հոգեւորականները, կառավարիչները, ուսումնականները՝ բոլորը ձեր քրտինքով են ապրում, ձեզ խաբում, ձեզ կեղեքում, դուք առաքինի էք, գործունեայ, բարոյական՝ նոքա բոլորովին հակառակը, և գիտենք, որ այդպէս խօսողներից մէկը միանգամ ծանապարհորդելիս չէր բարեհաճում ոչ մի կերպ իրեն մատուցած երկաթուղու առաջին կարգի օթեակում նստել, այլ բարկանում, նախատում՝ պահանջում էր, որ անպատճառ իր համար ննջարան—օթեակ պատրաստեն։ Պիտենք դորա փոխարէն և այն, որ մի անգամ «արեւմտեան կրօնամօլութեան կեդրոններից» մէկում մի պատկառելի ծերունի, մի պարզ համբաւաւոր հոգեւորական, որ ամբիոնի վերայից անխնայ յանդիմանել ու խրատել էր հարուստին և աղքատին, ճշմարտութեան գին ուր եղել թէ եկեղեցում և թէ հրապարակի վերայ, ամէնքի պակասութիւնները իրենց աչքի առաջ բաց արել՝ առանց իւրը ուրանալու, որ իւր ողջ կեանքը իւր հօտի բարօրութեան համար էր գործ դրել, տնէ տուն, քաղաքէ քաղաք ընկել, սգաւորին մխիթարել, խեղճի տնանկի համար օգնութեան միջոցներ որոնել, օգնութեան ձեռք կարկառել նոցա իւր բոլոր կարողութեամբ—չորրորդ կարգից իջաւ իրեն երկաթուղու կայարանում սպասող յարգողների բազմութեան առաջ, և երբ հարցրին զարմացած, «ինչո՞ւ չորրորդ կառքում», որով-

հետև հինգերորդ չիար՝ պատասխանեց համեստ ժպիտով:

Արժանաւորութեան այդ կեդրոններում մենք այնպիսի ուսուցիչներ ենք ունեցել, որոնք իրենց բազմակողմանի անդադրում աշխատութեանց մէջ ժամանակ են գտնում սոսկալի չքաւորութեան ներքոյ աստապող զործաւորներին, որոնքի ու այրիների կեղտի մէջ թաղուած բնակարանը լինելու, սփոփելու նոցա և նիւթական օգնութեան միջոցներ հայթայթելու նոցա համար: Արքա մեզ ևս տարել են այնպիսի տեղեր, սովորեցրել անձամբ տեսնել աստապեալ ժողովրդի վերքերը, կարեկցութեան զգացմունքով լեցուիլ նորան խղճի մտօք և բոլոր անձնութեամբ ծառայելու պատրաստուիլ: Արքա մշտական խօսքն այն է եղել ամբիոնի վերայից, որ քրիստոնէական զաղափարի առաջ երկրի իշխաններն, ամենարարձրաստիճան հոգեւորականն ու փողոցներ աւելող յետին մշակը նոյն կարգին են, և մենք այդ զաղափարով անուած, այդ զաղափարով պէտք է յառաջ ընթանանք կեանքի մէջ, եթէ խօսքը նոր աճող հոգեւորականութեան մասին է: Ղուք դուր էք հոգեւորականութեան անունը զանազան կուսակցութիւնների անուան հետ կապում: Արդաջէք մեր ուխտը մեր Վարերարի շիրմի առաջ և համոզուած եղէք, որ նուիրական վայրում, նուիրական ժամին երիտասարդ հոգեւորականի արտասանած երգումները նոյնը չեն, ինչ որ յառաջագէտ երիտասարդների հրապարակի վերայ բարձրահնչիւն ճառերով տուած խոստումները:

Ղուք խօսում էք ինչ որ իրաւունքների մասին, այդ կան այդպիսի իրաւունքների որոնց տէրը ոչ ժողովուրդն է և ոչ հոգեւորականը, որոնց պահպանութիւնն ու վերահսկողութիւնը սակայն հոգեւորական դասի ձեռքն է արուած, և վայ այն հոգեւորականին, որ իրեն յանձնած աւանդը սրբութեամբ չէ պահում, պատրաստ չէ իւր անձը դնել այդ իրաւունքների պաշտպանութեան համար:—Ղուք քաջ էք, զիտե՛նք, ձեր տարած յաղթութեանց

ապացոյցները ամենայն օր պարզ աչքով տեսնում ենք, և եթէ շարունակէք միշտ այդ ճանապարհով գնալ, ո՛վ գիտէ, դուք է կյանքով մի օր այդ իրաւունքները հանել իսկ հոգեւորականների ձեռքից... ժողովրդի անունով... բայց ում համար... ժողովուրդի... մի՞թէ այդքան միամիտ էք: Այո՛, քաջ էք դուք, և մենք տարակոյս անգամ չունինք, որ այն օրն իսկ, երբ այդպիսի իրաւունքները կորած կլինին, անցած այնպիսի մի տեղ, որտեղից ձեր բարձրագոյն աղաղակներով ոչինչ այլ ևս ետ բերել չէք կարող, չէք էլ փորձի՝ դուք երես կուեննաք դեռ պարծենալու կատարած քաջագործութիւններով, մեղը ուրիշների վերայ կձգէք: Չէ՞ որ դուք արդէն ընդունակ էք այնպիսի հրէշային նախադասութիւններ գործածելու, ինչպէս՝ «Լքմիածինը համարեա միշտ դռնուէլ է մեր հակառակորդների ձեռքում»... Ուրեմն Ս. Լքմիածինը կարող է սորա ու նորա ձեռքում լինել... ուրեմն դուք յոյս ունիք, որ նա մի օր էլ ձեր ձեռքում կլինի... խաղալի՜ կ'... գործիք ուրիշ ուրիշ նպապատակների համար: Գուցէ, ո՛վ գիտէ, չարամիտ է բաղդն ու փոփոխական... բայց եթէ կդայ մի այդպիսի օր՝ լաւ իմացած եղէք, որ Ս. Լքմիածնում կգտնուին մարդիկ, որոնց դիակի վերայից անցնելը յաղթական սեւ կառքերով զիւրին չի լինի ձեզ:

Ջարմանալի՜ ժամանակների մէջ ենք ապրում ճշմարիտ: Ժողովրդի զէմն է, ժողովրդի թշնամին մի հոգեւորականութիւն, որի հրամանատարը Հայոց Հայրիկն է, և ժողովրդի կողմը, նորա իրաւունքների պաշտպան այնպիսի մարդիկ, որոնք իրենց սենեակներում նստած երիտասարդ զործակալների միջոցով միայն շփումն ունին ժողովրդի հետ:

Մենք ժողովրդի հետ... բարի, շատ բարի, եղէք դուք ժողովրդի հետ: մենք արդէն իրականութեա՛, մէջ, կենդանի օրինակներով կապացուցանենք, թէ մե՛նք ում հետ ենք: Յաղթական երգերով կուրի ասպարեղ էք հրաւիրում մեզ, վստահ նախօրօք յաղթութեան վերայ: Խոստովանում ենք, որ այդ կոր-

ծանիչ ներքին կռիւք ոչինչ զուարճութիւն մեզ չէ պատճառում, որ մենք պարծենալու ոչինչ չենք գտնում, երբ արիւն արցունքի մէջ թողած խեղճ, անտիրական ժողովրդին՝ նորա անունով իրար մի բոկակալու պիտ ելնենք: Մենք լաւ ենք տեսնում այն անդունդը, որ լայն բերանով բացուած է հայի առաջ, և սոսկումով ենք դիտում, թէ ինչպէս այնտեղ զահալէժ դիմում են օրհասական եռանդով հարազատ, արիւնակից եղբայրներ՝ սպառնալով ամենքիս միատեղ քաշ տալ, և մենք կփորձենք կանգնեցնել այդ կորստաբեր հոսանքը: Այս մենք ընդունում ենք ձեր հրաւերը, ինչ արած, երբ կուեւ պէտք է, սրբազան իրաւունքների համար կուեւր և հաւատաշատ եղէք, որ ոչ մի քայլ չենք ընկրկի: Ժայռներ չենք մենք, բայց ժայռի վերայ ենք կանգնած՝ այնպէս հաստատուն, որ դատարկ քամիներն ու փոթորիկ մեզ վրդովել չեն կարող: Մեծ մեծ ակնկալութիւններ մենք չունինք. մեզ ողի տուողը պարտքի այն նուիրական քղաքցումն է, որի ազդեցութեամբ յոյս ունինք, թէ այն օրը, երբ մեր բուն Տէրը կգայ և անցած գնացածի համար հաշուի կպահանջի՝ խոնարհած աչքերով կարող պիտ լինինք ասել. «Ժառայք անպիտանք էաք, զոր պարտ էաք առնել արարաք»:

Կարապետ Վարդապետ:



ԵԿԵՂԵՅԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ.

ՎԵՀԱՓԸՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ

Ո ի Ղ Ե ի Ո Ր Ո ի Թ Ի Ի Ն Ր

Ազգիս Վեհափառ Հայրապետը՝ Նոյն Սայսերական Մեծութեանց ներկայանալուց յետոյ բարեհաճել է մնալ Պաշտատանի մայրաքաղաքում գարձեալ մօտ երկու շաբաթ՝ ի մեծ ուրախութիւն տեղւոյն հայ հասարակութեան: Այդ միջոցում Վեհափառ Հայրապետը այցելել է շատ նշանաւոր հաստատութիւններ և ամենուրեք ընդունուել է ամենամեծ շուքով: Վերջապէս յունիսի 13-ին՝ Նորին Օծութիւնը հաճել է մեկնել դէպի Մոսկուա, ուր արդէն անհամբերութեամբ սպասում էին Նորան:

Յաջորդ օրը, յունիսի 14-ին, Իւր չքախմբի, Մոսկուայի հայ հասարակութեան կողմից Պետերբուրգ գնացած պատգամաւորների և Պետերբուրգի հայ հասարակութեան անդամների ուղեկցութեամբ Վեհափառ Հայրապետը փառաւոր մօտ գործեց Մոսկուա, ուր օրեր առաջ պատրաստութիւններ էին տեսնուած Մեծ Հիւրին արժանաւայել պատուով ընդունելու համար: Նիկոլայեական երկաթուղու կայարանում համախմբուած է եղել Մոսկուայի գրեթէ ամբողջ հայ գաղութը, որ սրտաբուրբ ցնծութեան աղաղակներով ընդունել է պաշտելի Հայրիկին: Մի փառաւոր տեսարան է ներկայացրել Հայրապետական հանդիսաւոր գնացքը երկաթուղու կայարանից մինչև հայոց եկեղեցին, որ մի առանձին չքեղութեամբ զարդարուած է եղել թէ՛ ներքուստ և թէ՛ արտաքուստ: Եկեղեցում իւր սովորական ազօթքըն անելուց յետոյ՝ Նորին Սրբութիւնը մի համառօտ, բայց սրտառու զարոգով մխիթարել և օրհնել է Մոսկուայի հօտին:

Յունիսի 15-ին Վեհափառ Հայրապետն այցելել է Մոսկուայի ընդհանուր նահանգապետ Նորին Բարձրութիւն Մեծ իշխան Սերգէյ Ալեքսանդրովին, որ Նոյն օրը փոխ այցելութեան է գնացել Նորին Սրբութեանը և մնացել է Նորա մօտ 25 րոպէի չափ:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը այցելել է մի քանի նշանաւոր հաստատութիւններ, ի թիւս որոց և Լազարեան ձեմարանը, Գասպարեան անկելանոցը և այլն: Յունիս 18-ին Մոսկուայի հայ հասարակութիւնը մի հանդիսաւոր ճաշկերոյթ է պատրաստել ի պատիւ Նորին Օծութեան, և այդ առթիւ հանգանակութիւն է սկսուել յօգուտ Ս. Էջմիածնի վերաշինութեան: Մոսկուայում ինչպէս նաև Պետերբուրգում Վեհափառ Հայրապետը հոգեւորն է քարոզներով մխիթարել ու խրախուսել է իւր պանդուխտ զաւակներին՝ յորդորելով միշտ սիրելի իրենց մայր հայրենիքը, Ս. Էջմիածինը, չմոռանալ իրենց տառապեալ եղբայրներին, որոնց վիճակի բարեգրգման խնդրով այսօր զբաղուած է գրեթէ բոլանգակ բրիտանեայ աշխարհի մամուլը:

Յունիսի 23-ին Նորին Վեհափառութիւնը իւր հրաժեշտի օրհնութիւնը տալով Մոսկուայի հայերին՝ մեկնել է այնտեղից Թէոդոսիայի վրայով Մայր Աթոռս վերադառնալու: Նոյն ամսոյ 25-ին Լոզովո՝ Սևաստապոլեան երկաթուղու ջանկոյ կայարանում բաղդ են ունեցել ներկայանալու Վեհափառ Հայրապետին Խրիմի զանազան քաղաքներից եկած բազմաթիւ հայեր, որոնց իւր հայրական օրհնութիւնը տալուց յետոյ՝ շարունակել է իւր ձանոցարհը և Նոյն օրը ժամանել է Թէոդոսիա: Այստեղ ևս ինչպէս